ԳԻՏԱԳԵՆԱԶՈՂԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետում «Մակրոտնտեսագիտություն» դասընթացի շրջանակում «Ֆինանսներ» 3-րդ կուրսի հետ դասախոս, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանի ղեկավարությամբ կազմակերպվել են «ԱՀ տնտեսության արդի մարտահրավերները և հաղթահարման հնարավոր ուղիները» թեմայով գիտաճանաչողական ընթերցումներ: Բացման խոսքում Ռ.Մանգասարյանը կարևորել է հետպատերազմյան ժամանակաշրջանում նման հիմնախնդրի դիտարկումը, քանի որ ԱՀ տնտեսությունը 2020թ.-ի պատերազմի հետևանքով կանգնեց լուրջ մարտահրավերների առջև:

«Տարածաշրջանում փոխվել են տնտեսական զարգացման հնարավոր սցենարները: Նախ պետք է փաստել, որ պատերազմի արդյունքում հակամարտող կողմերը լուրջ տնտեսական վնասներ են կրել, հատկապես ՀՀ-ն և ԱՀ-ն՝ հաշվի առնելով հակառակ կողմի համեմատ տնտեսական վիճակը: Արցախի Հանրապետությունը զրկվել է նաև տնտեսական գործունեության ապահովման կենսական նշանակության մի շարք ենթակառուցվածքներից՝ պարփակվելով հետագա զարգացման համար չափազանց սահմանափակ հնարավորությունների տիրույթում: Այս իմաստով, հույժ հրատապ խնդիր է դառնում առկա ռեսուրսների և հնարավորությունների վերագնահատումը՝ դրանք հետպատերազմյան տնտեսության վերականգնմանը ծառայեցնելու նկատառումներով» - թեմայի արդիականությունը ընդգծել է Ռ. Մանգասարյանը:

Ուսանողները կատարել են թիմային աշխատանք և իրենց ուսումնասիրություններում դիտարկել են կառավարման համակարգին, գյուղատնտեսության, սննդի արդյունաբերության, էներգետիկային, սոցիալական աջակցությանն առնչվող հիմնախնդիրները, կատարել վիճակագրական վերլուծություններ և տվել հիմնավոր առաջարկություններ:

Միջոցառմանը հրավիրված էին ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի տնօրեն Հ. Ադամյանը, ԱՀ ներդրումային հիմնադրամի տնօրեն Ս. Հարությունյանը, ԱՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ն Մուսայելյանը, ԱՀ ՊԵԿ-ի նախագահի տեղակալ Ա.Մուսայելյանը, ԱրՊՀ պրոռեկտորները, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից
Խմբագիր՝ Զ. Սառաջյան
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5: Հեռ. (047) 94 04 91
Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Իմացի՛ր քո համալսարանի մասին:
Այցելի՛ր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»
№05(251)
հունիս -օգոստոս - 2023

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ԱրՊՀ ԱՄԵՆԱՄՅԱ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՃԱՄԲԱՐԸ

Արցախի պետական համալսարանի կողմից կազմակերպվող ամենամյա ամառային վրանային ուսանողական ճամբարն այս տարի ևս հաջողությամբ անց է կացվել՝ ապահովելով արդյունավետ և ակտիվ ուսանողական հանգիստ:

Հաղթահարելով երկրում ստեղծված իրավիճակով պայմանավորված առկա դժվարությունները՝ մոտ ութ տասնյակ ուսանողներ 10 օր իրենց ամառային հանգիստն անց են կացրել Պատարայի հրաշագեղ բնության գրկում:

Ճամբարի մասնակիցները հնարավորություն են ունեցել մասնակցելու պաշտոնական հանդիպումների, հրատապ թեմաներով դասախոսությունների, բանավեճերի, քննարկումների, ճանաչողական արշավների, էքսկուրսիաների, մարզական, մշակութային ծրագրերի:

Ուսանողները վառ տպավորություններով են վերադարձել ճամբարից՝ անցկացրած հրաշալի և անմոռանալի օրերի համար շնորհակալություն հայտնելով բուհի ղեկավարությանը և ճամբարի կազմակերպիչներին:

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԱՄՓՈՓՈՂ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Հունիսի 22-ին ԱրՊՀ-ում տեղի է ունեցել ուսումնական տարին ամփոփող գիտխորհրդի նիստը՝ ռեկտոր Արմեն Սարգսյանի նախագահությամբ: Նիստում քննարկվել, ի գիտություն են ընդունվել և հաստատվել են ուսումնական գործընթացին վերաբերող, կանոնակարգային և մի շարք այլ հարցեր:

Օրակարգի առաջին հարցով ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը ներկայացրել է 2022-2023 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները: Ըստ պրոռեկտորի տեղեկատվության՝ չնայած շրջափակման հարուցած խոչընդոտներին՝ ԱրՊՀ ղեկավարության կայացրած արդյունավետ որոշումների արդյունքում հնարավոր է դարձել հաղթահարել խնդիրները և գործընթացը կազմակերպել բնականոն, առանց էական խնդիրների՝ շրջափակման հետևանքով Արցախի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող ուսանողներին ևս հնարավորություն ընձեռելով հեռավար եղանակով մասնակցելու քննություններին: Նրա գնահատմամբ՝ արդյունքները գոհացուցիչ են, բայց նաև անհրաժեշտ է որակի շարունակական բարելավման ուղղությամբ աշխատանքների իրականացումը:

Օրակարգի հաջորդ հարցով գիտխորհուրդը քննարկել և հաստատել է 2023-2027 ուսումնական տարվա բակալավրիատի առկա ուսուցման, 2023-2025 ուսումնական տարվա մագիստրատուրայի առկա ուսուցման, 2023-2028 ուսումնական տարվա բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգերի կրթական ծրագրերը: Հարցը ներկայացրել է պրոռեկտոր Գ. Սահակյանը:

Օրակարգային՝ «Կրթական ծրագիր կազմելու ուղեցույց»-ի հաստատման մասին հարցը գիտխորհրդին է ներկայացրել ԱրՊՀ որակի ապահովման կենտրոնի վարիչ Շ.Սաղյանը՝ մանրամասնելով ուղեցույցի բովանդակությունը, ՄԿՇ մշակման կողմնորոշիչները և պահանջները, կառուցվածքը, նպատակներն ու խնդիրները և այլ հարցեր: Գիտխորհուրդը հարցը քննարկել և հաստատել է:

Նիստը քննարկել և կողմ է քվեարկել նաև օրակարգային հարցերից ԱրՊՀ գիտական խորհրդի 2015 թվականի հուլիսի 3-ի N 16-լ որոշման մեջ լրացում կատարելու մասին հարցին (հարցը ներկայացրել է ռեկտոր Ա. Սարգսյանը), տպագրության երաշխավորել ,ԱրՊՀ գիտական տեղեկագիրե պարբերականի հերթական համարը (հարցը ներկայացրել է պրոռեկտոր Վ.Ավանեսյանը) և մի շարք ուսումնամեթոդական ձեռնարկներ:

Այլ հարցերում գիտխորհուրդը հաստատել է տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս, տ.գ.թ. Գոհար Սարգսյանին դոցենտի կոչում շնորհելու և այն ՀՀ ԲՈԿ-ի վավերացմանը ներկայացնելու հարցը, ԱրՊՀ ասպիրանտների անհատական աշխատանքային պլանները:

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ ԱՐՊՀ-ՈՒՄ

Հունիսի 6-ը նշվում է որպես ռուսաց լեզվի միջազգային օր: Օրվա առթիվ ԱրՊՀ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի ու ԼՂՀ ռուսական համայնքի համատեղ նախաձեռնությամբ կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում՝ նվիրված Արցախի բուհերում ռուսաց լեզվի դասավանդման հիմնախնդիրներին:

Կլոր սեղան-քննարկմանը մասնակցում էին ներկայացուցիչներ Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմից, ԱՀ ԿԳՄՍ նախարարությունից, ԼՂՀ ռուսական համայնքից, Արցախում գործող բուհերում ռուսաց լեզու և գրականություն դասավանդող դասախոսներ, դպրոցների ուսուցիչներ:

Քննարկվել են ռուսաց լեզվի դասավանդման մակարդակի շարունակական բարձրացմանը, դասախոսների վերապատրաստման դասընթացների կազմակերպմանը, վերջին տարիներին «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտությամբ դիմորդների թվի նվազմանը, շրջանավարտների զբաղվածությանը և հարակից այլ խնդիրներին վերաբերող հարցեր:

Քննարկման արդյունքում վեր են հանվել մի շարք խնդիրներ, նախանշվել անելիքներ՝ ընդգծելով ռուսաց լեզվի՝ որպես Արցախի Հանրապետության երկրորդ պաշտոնական լեզվի դասավանդման որակի շարունակական կատարելագործման անհրաժեշտությունը:

Ռուսաց լեզվի միջազգային օրվա առթիվ ԱրՊՀ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնին ԱՀ նախագահի աշխատակազմի կողմից շնորհվել է շնորհակալագիր՝ Արցախում ռուսաց լեզվի և գրականության պահպանման և զարգացման, հայ և ռուս ազգային մշակույթների ինտեգրման գործում ունեցած նշանակալի ավանդի համար:

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ Է ԱՌՑԱՆՑ ԷՔՍԿՈՒՐՍԻԱ

ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնը տարբեր ֆակուլտետների ուսանողների համար կազմակերպել է առցանց էքսկուրսիա Տրետյակովյան պատկերասրահում: Սա լրացուցիչ կրթության ևս մի ձև է, որը միտված է ուսանողներին ծանոթացնելու ռուսական մշակույթի ավանդույթներին, ռուս ժողովրդի պատմական ժառանգությանը:

Տրետյակովյան պատկերասրահը աշխարհի խոշորագույն թանգարաններից մեկն է: Ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Ինգա Հակոբյանի խոսքով՝ միջոցառումը նպաստում է ուսանողների էսթետիկ ճաշակի ձևավորմանը, ընդհանուր աշխարհայացքի ընդլայնմանը, հետաքրքրության զարգացմանը և ակտիվությանը:

Նման միջոցառումները կարևոր նշանակություն ունեն հատկապես հիմա՝ քաղաքական իրավիճակով պայմանավորված: Առցանց էքսկուրսիայի վերջում տեղի է ունեցել վիկտորինա՝ ներկայացված նյութերի հիման վրա:

Միջոցառմանը հրավիրված էին ԱՀ ԿԳՄՍ նախարարության, ԱՀ նախագահի աշխատակազմին կից ռուսաց լեզվի բաժնի ներկայացուցիչներ, Գրիգոր Նարեկացի համալսարանի ռուսաց լեզվի ամբիոնի դասախոսներ և ուսանողներ:

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ԵՎՍ ՍՏԱՑԱՆ ԻՐԵՆՑ ԴԻՊԼՈՄՆԵՐԸ

Արցախի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետում օրը նշանավորվեց շրջանավարտներին դիպլոմների շնորհման հանդիսավոր արարողությամբ:

2022-2023 ուստարում ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետը թողարկելէ բակալավրիատի և մագիստրատուրայի 144 շրջանավարտ, որից 29-ը՝ գերազանցության վկայագրերով:

Նախքան արարողության մեկնարկը՝ համալսարանականները ծաղիկներ են խոնարհել ԱրՊՀ զոհված ուսանող ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողին:

Շրջանավարտներին դիպլոմները հանդիսավոր շնորհել, շնորհավորանքի և բարեմաղթանքի խոսք են հղել ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը, դեկան Վոլոդյա Միրզոյանը, ամբիոնների վարիչներ:

Պրոռեկտոր Գեորգի Սահակյանը, կարևորելով պահանջարկ ունեցող մասնագետ դառնալու հանգամանքը, ընդգծել է նաև կյանքում լավ մարդ լինելու անհրաժեշտությունը: Շնորհավորելով շրջանավարտներին՝ նա հորդորել է լավ մասնագետ լինելուց բացի, լինել լավ մարդ:

Դեկան Վոլոդյա Միրզոյանը, շնորհավորելով շրջանավարտներին, շնորհակալություն է հայտնել նրանց ծնողներին ու դասավանդած դասախոսներին:

«Ձեզնից շատերը ակտիվ մասնակցություն են ունեցել հայրենիքի պաշտպանությանը, և այսօր էլ շարունակում եք: Վստահ եմ, որ դուք բարձր կպահեք Արցախի պետական համալսարանի հեղինակությունը: Մաղթում եմ բոլորիդ, որ ձեր ստացած գիտելիքները ծառայեցնեք ի նպաստ հայրենիքի և ձեր կապը մշտապես պահեք համալսարանի հետ: Համոզված եղեք, այստեղ ձեզ սիրում ենք, կսպասենք որպես գործընկեր»,-նշել է Վոլոդյա Միրզոյանը՝ դիմելով շրջանավարտներին:

«Արցախի պատմության այս դժվարին օրերին ԱրՊՀ-ն մեր տունն ու օջախն էր: Մեր ձեռքբերումների համար պարտական ենք այս կրթօջախին: Շնորհակալ ենք մեզ կրթած և մասնագիտական մեծ ներդրում ու աջակցություն ցուցաբերած դասախոսներին: Երախտագիտության խոսքեր ասելիս ընդգծենք սահմանին կանգնած զինվորների ու սպաների դերը, նրանց անկոտրում կամքի, խիզախության, անձնազոհության շնորհիվ մենք այստեղ ենք, խոնարհվում ենք նրանց առջև: Շարունակելու ենք ապրել, սովորել ու սովորեցնել, ստեղծագործել ու արարել Արցախում և հանուն Արցախի, մեր ունեցած գիտելիքները պետք է ծառայեցնենք հանուն մեկ նպատակի՝ ազատ ու անկախ Արցախ ունենալուն»,-շրջանավարտների անունից շնորհակալական խոսք է ասել շրջանավարտ Ռուզաննա Սահակյանը:

ԱրՊՀ-ՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Հուլիսի 3-ին Արցախի մայր բուհում կազմակերպվել է Ստեփանակերտ քաղաքի ուսումնական հաստատությունների հոգեբանների, սոցիալական մանկավարժների, սոցիալական աշխատողների, հատուկ մանկավարժների, լոգոպեդների մասնագիտական վերապատրաստման և ատեստավորման դասընթաց:

Դասընթացը կազմակերպվել է «Արցախի հոգեբանների միություն» մասնագիտական հասարակական կազմակերպության կողմից՝ ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ԱրՊՀ եւ «Էրուդիցիա» գիտահետազոտական-վերլուծական կենտրոնի աջակցությամբ:

«Վերապատրաստման դասընթացի նպատակն է նպաստել սոցիալական և հատուկ մանկավարժության, հոգեբանության բնագավառի մասնագետների՝ հոգեբանների և հատուկ մանկավարժների, սոցիալական մանկավարժների և լոգոպեդների մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացմանը, կատարել այդ մակարդակի գնահատում, կատարելագործել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների, ինչպես նաև հոգեբանական խնդիրներ ունեցող անձանց հետ հոգեկարգավորիչ, շտկողական և վերականգնողական աշխատանքներ իրականացնելու հմտությունները և կարողությունները, լիազոր մարմնին առաջարկություն ներկայացնել՝ դասընթացի վերլուծության արդյունքում»,-ասել է ԱրՊՀ պրոռեկտոր, Արցախի հոգեբանների միության նախագահ Վիտյա Յարամիշյանը:

ԱՀ ԿԳՄՍ նախարար Նորայր Մկրտչյանն իր խոսքում նշել է, որ նախաձեռնությունը չափազանց կարևոր է դպրոցներում և հանրակրթական մյուս ուսումնական հաստատություններում սովորող կրթության առանձնահատուկ պայմաններ պահանջող երեխաների համար:

«Ներառական կրթություն պահանջող երեխաների թիվը մեծ է մայրաքաղաքում, բայց նույն խնդրով երեխաներ կան նաև շրջանների ուսումնական հաստատություններում, և այս ձևաչափով վերապատրաստման դասընթացներ պետք է իրականացնենք նաև շրջաններում»,-հավելել է Ն. Մկրտչյանը:

Մայր բուհի ռեկտոր Արմեն Սարգսյանը, իր հերթին կարևորելով նախաձեռնությունը, նշել է, որ բուհը պատրաստ է հարմարավետ ու տեխնիկապես զինված լսարաններ տրամադրել դասընթացները լիարժեք ու արդյունավետ կազմակերպելու համար:

«Բուհում տարեցտարի ավելանում է «Հոգեբանություն» բաժնի դիմորդների թիվը, ինչը ողջունելի է: Սա նշանակում է, որ հանրության շրջանում մեծ հետաքրքրություն կա այս մասնագիտության և կրթական ծրագրի հանդեպ:Դժբախտաբար, այսօր մեզ մոտ իրավիճակն աստիճանաբար լարվում է, և հոգեբանական աջակցության կարիք ունեն բոլորը, իսկ այսպիսի դասընթացների կազմակերպումը շատ կարևոր է խնդրին ինչ-որ կերպ լուծում տալու համար»,-ընդգծել է Ա. Սարգսյանը:

Դասընթացի ավարտին մասնակիցները ստացել են վկայագրեր:

ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐԸ ՍՏԱՑԱՆ ԻՐԵՆՑ ԴԻՊԼՈՄՆԵՐԸ

Հունիսի 1-ին ԱրՊՀ տնտեսագիտական ֆակուլտետում կազմակերպվել է 2022-2023 ուստարվա շրջանավարտների դիպլոմների շնորհման հանդիսավոր արարողությունը:

Բակալավրիատի և մագիստրատուրայի 71 շրջանավարտ է թողարկել տնտեսագիտության ֆակուլտետը:

Համալսարանականները ծաղիկներ են խոնարհել զոհված ուսանող ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողին:

Շրջանավարտներին շնորհավորել և բարեմաղթանքի խոսք են ասել ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանը, ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Նարինե Ավանեսյանը, տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Դավիթ Աղաջանյանը, ուսանողական խորհրդի նախագահ Մարիամ Վահանյանը:

«Մենք հպարտանում ենք մեր այն շրջանավարտներով, ովքեր իրենց գիտելիքները ծառայեցնում են մեր պետականաշինությանը տարբեր ոլորտներում: Մաղթում եմ, որ դուք էլ ձեր գիտելիքները ծառայեցնեք ի նպաստ Արցախի և Արցախի լինելության: Մենք պարտք ունենք մեր անմահացած տղաների հիշատակի առջև՝ ամեն ինչ անել, որ ապրի Արցախը»,-ասել է Ռուզաննա Մանգասարյանը:

Տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» մասնագիտության շրջանավարտ Քրիստինե Կարապետյանը, շնորհավորելով շրջանավարտներին, նշել է, որ ԱրՊՀ շրջանավարտ լինելը պատիվ է և պարտավորեցնող. «Բակալավրիատի ուսանողներս մեզ հետ տանում ենք 4 տարիների ընթացքում կուտակած գիտելիք, փորձ, ամենաբարի խորհուրդներ և ամենակարևորը՝ մարդկային ամենաջերմ հարաբերություններ: Անչափ շնորհակալ ենք մեր ուսումնառության ընթացքին աջակից բոլոր մարդկանց՝ ի դեմս ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի»:

ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Արցախի պետական համալսարանում շարունակվում են դիպլոմների շնորհման հանդիսավոր արարողությունները՝ ըստ ֆակուլտետների: Հերթականն այսօր բանասիրական ֆակուլտետում էր:

2022-2023 ուստարում ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետը թողարկում է բակալավրիատի և մագիստրատուրայի 140 շրջանավարտ, որից 24-ը՝ գերազանցության վկայագրերով:

Արարողությունը մեկնարկել է հարգանքի տուրքով՝ ԱրՊՀ զոհված ուսանող ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողին ծաղիկներ խոնարհելով:

Շրջանավարտներին դիպլոմները հանդիսավոր շնորհել, շնորհավորանքի խոսք են հղել ԱրՊՀ գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը, դեկան Լուսինե Մարգարյանը, ամբիոնների վարիչներ և ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնաժողովների նախագահները:

Պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը, շնորհավորելով շրջանավարտներին, նշել է, որ ուսումնական տարին բարդ էր՝ լի դժվարություններով, որը կապված էր Ադրբեջանի կողմից Արցախի նկատմամբ իրականացվող քաղաքականությամբ: Շրջափակումը և դրա հետևանքով ստեղծված խնդիրները հաղթահարելով՝ համալսարանականները կարողացել են ուսումնական տարվա նախաշեմին հաստատված ուսումնական պլանների համաձայն իրականացնել ուսումնական գործընթացը:

«Խորհրդանշական է, որ դիպլոմների շնորհման արարողությունն իրականացնում ենք զոհված ուսանող ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողի մոտ: Մաղթում եմ, որ մեր շրջանավարտները արարեն Արցախում և իրենց ստացած գիտելիքները ծառայեցնեն ի նպաստ հայրենիքի շենացման»,-նշել է պրոռեկտորը:

ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Հունիսի 6-ին Արցախի պետական համալսարանում տեղի է ունեցել պատմության և իրավագիտության ֆակուլտետի շրջանավարտների դիպլոմների շնորհման հանդիսավոր արարողությունը:

2022-2023 ուստարում ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետը թողարկել է բակալավրիատի և մագիստրատուրայի 99 շրջանավարտ, որից 23-ը՝ գերազանցության վկայագրերով:

Ավանդույթի համաձայն՝ համալսարանականները նախ ծաղիկներ են խոնարհել ԱրՊՀ զոհված ուսանող ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողին՝ հարգանքի տուրք մատուցելով անմահացած քաջորդիների հիշատակին:

Շրջանավարտներին դիպլոմները հանդիսավոր շնորհել, շնորհավորանքի և բարեմաղթանքի խոսք են հղել ԱրՊՀ գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը, դեկան Արմինե Առստամյանը և ամբիոնների վարիչները:

Պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը, շնորհավորելով շրջանավարտներին, նշել է, որ ուսումնական տարին թեև դժվարություններով լի էր, այնուամենայնիվ ԱրՊՀ դասախոսներն ու ուսանողները համատեղ ջանքերով կարողացան իրենց առջև դրված խնդիրները պատվով լուծել:

«Հիշարժան օր է բոլորիս համար: Այսօր դուք վերջապես ձեռք եք բերում ձեր մասնագիտությունը փաստող դիպլոմը: Թող խաղաղ պայմաններում կարողանաք իրացնել ձեր մասնագիտական գիտելիքները: Թող ձեր ստացած գիտելիքները ի սպաս դրվեն մեր հայրենիքի շենացմանը»,-շնորհավորելով շրջանավարտներին՝ նշել է դեկանը:

Կերպարվեստի և գծագրության ամբիոնի վարիչ, ԼՂՀ վաստակավոր նկարիչ, պրոֆեսոր Լավրենտ Ղալայանի խոսքով՝ ուսանողների հետ այս տարիներին համատեղ աշխատանքի արդյունքում դարձել են մի ընտանիք, բաժանման պահը և՝ հպարտության տեղիք է տալիս, և՝ տխրելու: «Որտեղ էլ լինեք, ինչ ոլորտում էլ աշխատեք, շարունակեք անպայման մի ձեռքը պահել արվեստի ոլորտում և ստեղծագործե՛ք՝ ձեր գիտելիքներն ու կարողությունները ծառայեցնելով հայրենիքին»,-նշել է Լավրենտ Ղալայանը:

«30 տարի առաջ այս հուշակոթողը չկար, և մեր տղաները մեզ հետ կողք կողքի կանգնած էին: Այսօր նրանք հուշարձան դարձած են մեզ հետևում և անխոս պատգամում շարունակել իրենց կիսատ թողած գործը: Շնորհավորում եմ բոլորիդ և մաղթում ձեր գիտելիքները ծառայեցնել ի նպաստ հայրենիքի: Այս տղաներից շատերն իրենց դիպլոմները ստացան հետմահու, հանուն հայրենիքի անմահացան և չհասցրին ավարտել բուհը: Նրանց շնորհիվ է, որ այսօր Արցախը կա, և սերունդները վայելում են այս հիշարժան պահը՝ Արցախի մայր բուհի ավարտական վկայական ստանալը»,-շրջանավարտներին շնորհավորել է պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ Նունե Սարումյանը:

«Ես մաղթում եմ Ձեզ, որ լավ մասնագետներ դառնաք, կյանքում լինեք երջանիկ և ապրեք ու արարեք Արցախում»,-նշել է իրավունքի ամբիոնի վարիչ Տաթև Գևորգյանը:

«Իրավագիտություն» կրթական ծրագրի շրջանավարտ Սերգեյ Խաչատրյանն ասում է՝ ակնթարթի պես թռավ ուսանողական կյանքի չորս տարին. «Շնորհակալություն եմ հայտնում մայր բուհին, մեր պրոֆեսորադասախոսական կազմին տված գիտելիքների համար: Նրանք առավելագույնն են արել, որպեսզի մեր ուսումնառությունը կազմակերպվի բարձր մակարդակով: Չեմ ուզում բաժանվել ԱրՊՀ-ից: Ուսումս կշարունակեմ մագիստրատուրայում»: